ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 70-Ա/Հ <<02>> մայիսի 2018թ.

<<ԵՐԵՎԱՆԻ Գ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 190 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ N 815 ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ N 816 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2007Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 1027-Ա/Ք, N 1028-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ N 1029- Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, <<Իրավական ակտերի>> մասին ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 72-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված 7-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով, և հիմք ընդունելով հաստատության տնօրենի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարության 2007թ նոյեմբերի 7-ի <<Երևանի քաղաքապետարանի Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը տարրական ընդհանուր կրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին>> N 1027-Ա/Ք հրամանը և դրա հիմքով տրված N 815 լիցենզիան, և դադարեցնել <<ԵՐԵՎԱՆԻ Գ.

ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 190 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրված տարրական ընդհանուր կրթական ծրագրով գործունեության N 815 լիցենզիայի գործողությունը:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարության 2007թ նոյեմբերի 7-ի <<Երևանի քաղաքապետարանի Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը հիմնական ընդհանուր կրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին>> N 1028-Ա/Ք հրամանը և դրա հիմքով տրված N 816 լիցենզիան, և դադարեցնել <<ԵՐԵՎԱՆԻ Գ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 190 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրված հիմնական ընդհանուր կրթական ծրագրով գործունեության N 816 լիցենզիայի գործողությունը:

3. <<ԵՐԵՎԱՆԻ Գ. ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 190 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> պետական ոչ առևտրային կազմակերպության միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրով սահմանային 220 տեղերի թիվն ավելացնել 944-ով, և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 7-ի <<Երևանի քաղաքապետարանի Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը միջնակարգ/լրիվ/ ընդհանուր կրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին>> N 1029-Ա/Ք հրամանի 1-ին կետի <<220>> թիվը փոխարինել <<1164>> թվով:

4. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիության նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ